

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆՏ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 9 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱ-
ՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՆԱԶՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի ԹԻՎ 16-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՆԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 հունիսի 2012թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի /նախագահող/, Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի /զեկուցող/, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվա-
ծի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դա-
տարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի
ՆՏ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով
թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի
թիվ 16-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայասարանի Նանրապետության Ազգային ժողովի
մեծամասնական ընտրակարգով թիվ 9 ընտրատարածքում պարզամավորի թեկնա-
ծու Լ. Զուրաբյանի՝ 16.05.2012թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված
դիմումն է:

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը 2012թ. մայիսի
21-ի աշխարակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումի ընդունելիության

հարցը, որոշում է կայացրել «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի եւ 74-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՏՏ սահմանադրական դատարանի անդամ Ա. Խաչատրյանը:

Սահմանադրական դատարանում դիմող կողմի ներկայացուցիչն է փաստաբան Վ. Գրիգորյանը, պատասխանող կողմի ներկայացուցիչներն են՝ թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Ե. Տերպերյանը եւ ՏՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Նովիաննիսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թիվ 34 ընտրական տեղամաս:

Թիվ 9 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պարզամավորի 4 /չորս/ թեկնածու: Ըստ թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 55742 է, իսկ ընտրություններին մասնակցել է 31902 ընտրող: Թեկնածուների օգտին փորձած ձայների թիվը 29958 է, որը բաշխվել է հետևյալ կերպ. Ն. Ազիզյան՝ 8933, Լ. Զուրաբյան՝ 4290, Ռ. Նակոբյան՝ 4213, Ռ. Սադոյան՝ 12522: Անճշտությունների թիվը կազմել է 116:

Թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումով թիվ 9 ընտրատարածքից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամավոր է ընտրվել Ռ. Սադոյանը:

2. Դիմելով սահմանադրական դատարան՝ դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել «Թիվ 9 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամակոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը եւ ընտրությունների արդյունքները:

Դիմողի պնդմամբ՝ թիվ 9 ընտրատարածքի բոլոր տեղամասերում խախտվել է ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը: Այդ դրույթի պահանջներին համապատասխան դրոշմակնքում չիրականացնելու արդյունքում չի գործել կրկնակի քվեարկության հնարավոր դեպքերի կանխմանն ուղղված իրավական երաշխիքը:

Դիմող կողմը պնդում է նաեւ, որ ընտրությունների անցկացման, կազմակերպման եւ քվեարկության օրվա դրությամբ խախտվել է նաեւ հավասար մրցակցային պայմաններում ընտրություններին մասնակցելու իր սահմանադրական իրավունքը՝ համաձայն Սահմանադրության 4-րդ հոդվածի: Այս պնդումը դիմողը փաստարկում է Նայասրանի Նանրապետական կուսակցության նախագահ Ս. Սարգսյանի կողմից Նայասրանի Նանրապետության Նախագահի իրավասությունների իրականացման հետ համարել նախընտրական քարոզչությանը մասնակցությամբ, ինչպես նաեւ ՆՏ վարչապետի եւ պետական այլ պաշտոնյաների՝ քարոզարշավին մասնակցությամբ:

Դիմումում բերված հիմնավորումները եւ պարճառաբանությունները կրկնում են 2012 թվականի մայիսի 6-ի ՆՏ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքներով ՆՏ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի N 265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ սահմանադրական դատարանում քննության առնված դիմումի 2.3.1., 2.3.2., 2.1.1., 2.1.3., 2.1.4., 2.1.6., 2.2., 2.2.1., 2.2.2., 2.2.3., 2.2.4., 2.5., 3., 4. կետերը: Փոխվել է միայն դրանց շարադրման հաջորդականությունը:

3. Պատասխանող կողմը գտնում է, որ ընտրության արդյունքներով ընդունված որոշումը վիճարկելու եւ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է: Պատասխանողը նշում է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ընտրություններին մասնակցելը եւ նախընտրական քարոզչություն իրականացնելը չի կարող որակվել որպես ՆՏ Սահմանադրության 2-րդ հոդվածին հակասող: ՆՏ Սահմանադրությունը հստակ սահմանել է թե՛ ակտիվ եւ թե՛

պասիվ ընտրական իրավունքի սահմանափակումները: Այդ սահմանափակումները կոնկրետացված են ՆՏ ընտրական օրենսգրքում: ՆՏ ընտրական օրենսգրքի 18 և 22-րդ հոդվածների վերլուծության արդյունքում պարասխանող կողմը գտնում է, որ պաշտոնավար անձինք, այդ թվում՝ քաղաքական պաշտոններ զբաղեցնողները՝ ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումների հաշվառմամբ, ազատ են իրականացնել նախընտրական քարոզչություն:

Պարասխանող կողմը նշում է նաև, որ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում պաշտոնավար անձանց կողմից ընտրական օրենսգրքով նախատեսված սահմանափակումները խախտելու վերաբերյալ դիմողի կողմից որևէ դիմում դատարաններն ու ընտրական հանձնաժողովները չեն ստացել:

Դիմողի կողմից մարնանշվող՝ ՆՏ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման առնչությամբ պարասխանող կողմը նշում է, որ այդ առումով դիմողի եզրահանգումները ենթադրյալ են, եւ դիմողը չի մարնանշում կրկնակի քվեարկության որևէ կոնկրետ դեպք: Ավելին, թվով 34 ընտրատեղամասերից 32-ի գրանցամատյաններում ընդհանրապես որևէ խախտման փաստ չի գրանցվել, իսկ մյուս երկուսում արված թվով երեք գրանցումներն ունեցել են մասնակի բնույթ:

4. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, վիճարկելով «Թիվ 9 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամավոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը, ինչպես նշվեց, կրկնում է նույն փաստարկները, ներկայացնում նույն միջնորդությունները, ինչ «Նայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ Նայաստանի Նանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 13-ի՝ «Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով պարզամավորներ ընտրվելու մասին» N265-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործի շրջանակներում սահմանադրական դատարան էին ներկայացրել «Նայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչներ՝ սույն գործով դիմողը եւ նրա ներկայացուցիչը: Ի հիմնավորումն թիվ 9 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշման անվավերության՝ դիմողը բացի նշված գործով ներկայացրած փաստարկներից, որևէ այլ լրացուցիչ փաստարկ սահմանադրական դատարան չի ներկայացրել:

Սահմանադրական դատարանն այդ փաստարկների վերաբերյալ իր իրավական դիրքորոշումներն արտահայտել, ինչպես նաև դիմումում ներկայացված փաստերի ու միջնորդությունների վերաբերյալ իր իրավական գնահատականներն է ԿԿԵ 2012թ. մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշման մեջ:

Նաշվի առնելով «Նայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի կողմից վերոհիշյալ գործի շրջանակներում ներկայացված եւ սույն գործով դիմողի ներկայացրած փաստերի ու փաստարկների նույնականությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՍԴՈ-1028 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներն ու իրավական գնահատականները հավասարապես վերաբերելի են նաև քննության առարկա սույն գործին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ 2012թ. մայիսի 21-ի ՍԴԱՈ-32 աշխարակարգային որոշմամբ պահանջվել էր պարասխանող կողմից սույն գործով գրավոր բացատրությունը սահմանադրական դատարան ներկայացնել գործի դատաքննությունից առնվազն 7 օր առաջ՝ այն դիմողին տրամադրելու եւ դրա առնչությամբ դիմողի նկատառումները նիստից առնվազն երեք օր առաջ դիմողի կողմից սահմանադրական դատարան ներկայացնելու համար: Պարասխանող կողմը համապարասխան նյութերը սահմանադրական դատարան է ներկայացրել 01.06.2012թ.: Նույն օրը, սահմանված կարգով, սահմանադրական դատարանի աշխարակազմի կողմից 29 թերթ ծավալով նյութերը թիվ Ա-258 գրությամբ ուղարկվել է դիմող կողմին՝ շեշտելով, որ «...պարասխանող կողմի գրավոր բացատրության առնչությամբ Ձեր գրավոր նկատառումները պետք է սահմանադրական դատարան ներկայացնել նիստից առնվազն երեք օր առաջ»: Նիստից մեկ օր առաջ՝ 11.06.2012թ., դիմողի ներկայացուցիչը բանավոր տեղեկացրել է սահմանադրական դատարանին, որ իրենց ասելիքն ամբողջությամբ շարադրված է դիմումում եւ ավելացնելու ոչինչ չունեն:

5. Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-703 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված յուրաքանչյուր վեճ պետք է քննության առարկա դառնա կոնկրետ ընտրական իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ հաշվի առնելով ընտրությունների նախապարաստման եւ անցկացման ընթացքում տեղ գրած եւ ժամանակին բացահայտված ու իրավաբանորեն անհրաժեշտ հիմնավորմամբ ներկայացված այնպիսի խախտումներ, որոնք կվկայեին պասիվ ընտրական

իրավունքի խախտման մասին, եւ որոնք կարող էին հիմք ծառայել ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար:

Վերահասարակելով իր այդ իրավական դիրքորոշումը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պարզամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով դիմողից պահանջվում է ապացուցողական նշանակություն ունեցող փաստերի եւ փաստարկների միջոցով հիմնավորել վերջիններիս անմիջական ազդեցությունը թեկնածուներին տրված ձայների հարաբերակցության վրա, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում բացահայտել պարճառահետեւանքային կապի առկայությունը վկայակոչված փաստերի ու դիմողի պատիվ ընտրական իրավունքի խախտման միջեւ: Այս պահանջը բխում է ինչպես մյուս թեկնածուների պատիվ ընտրական իրավունքի, այնպես էլ ընտրողների ակտիվ ընտրական իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունից: Նման անմիջական ազդեցության եւ պարճառահետեւանքային կապի առկայությունը կարող է միայն հիմք հանդիսանալ վիճարկվող որոշումից փարբերվող այլ որոշում կայացնելու համար: Այլապես, կվրանգվեն մյուս թեկնածուների ընտրվելու եւ ընտրողների՝ ընտրելու իրավունքները:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումներին համապատասխան գնահատելով քննության առարկա դիմումում բերված փաստերի ու փաստարկների ազդեցությունը դիմողի պատիվ ընտրական իրավունքի իրացման վրա, ուսումնասիրելով թիվ 9 ընտրարարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 10-ի թիվ 12-Ա եւ 13-Ա, մայիսի 11-ի թիվ 14-Ա, 15-Ա եւ 16-Ա որոշումները՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը չի ներկայացրել ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի հիմնավորումներ, որոնք կվկայեին թիվ 9 ընտրարարածքում իր պատիվ ընտրական իրավունքի այնպիսի խախտումների մասին, որոնք հիմք կարող էին հանդիսանալ ընտրությունների արդյունքներով այլ որոշում կայացնելու համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Թիվ 9 ընտրարարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամավոր ընտրվելու մասին» թիվ 9 ընտրարարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 16-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Նայաստանի Նանրապեղության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12 հունիսի 2012 թվականի
ՍԴՈ- 1031